4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը կնքվում է **5 (հինգ) տարի** ժամանակով մինչև՝ 31.12.2018 թվականը:
4.2. Կապված սույն պայմանագրի առարկայի հետ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագրի կնքելը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած 01.01.2013 թվականից քանի որ ենթավարձակալը սկսած 01.01.2013 թվականից մինչև օրս տարածքի ենթավարձակալությամբ տրվող մասը փաստացի օգտագործել է :
4.3. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից և լուծել այն 3(երեք) ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:
4.4. Սույն պայմանագիրը կնքված է համարվում, սույն պայմանագրից ծագող իրավունքը գրանցելու պահից:

5.ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

5.1.ենթավարձակալած գույքից ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:
5.2. ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից առանց ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնության կատարված ենթավարձակալած «ՕԲՅԵԿՏ»-ի մասի անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1. ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒԻ և ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԻ պահանջով ենթավարձակալության պայմանագիրը կատարող է վաղաժամկետ լուծվել համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Սույն պայմանգրով ստանձնած պարատվորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթավարձատուից գանձվում է տուգանք սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5 % -ի (զրո ամբողջ հինգ) տոկոսի չափով:
7.2. Սույն պայամանգրով նախատեսված Օբյեկտի մասի հանձնման ժամկետը խախտելու դեպքում ենթավարձատուից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05%-ի (զրո ամբողջ զրո հինգ) տոկոսի չափով:
7.3 .Սույն պայմանգրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում են ենթավարձատուին վճարման ենթակա գումարներից:
7.4.ենթավարձակալի կողմից սույն պայմանգրի 3.1. կետով նախատեսված ժամկետի խախտման համար ենթավարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝վճարման ենթակա,սակայն չվճարված գումարի 0.05%-ի (զրո ամբողջ զրո հինգ) տոկոսի չափով:
7.5. Սույն պայամանգրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.6. Տույժերի և /կամ / տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
7.7. Սույն պայմանագրի լուծման դեպքեում ենթավարձակալը պարտավոր է 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ենթավարձատուին վերադարձնել գույքը , ինչպես նաև մարել ենթավարձատուի հանդեպ ունեցած պարտքերը:
7.8.Սույն պայմանագրի լուծման դեպքում 7.7. կետում նշված ժամկետում գույքը չվերադարձնելու դեպքում ենթավարձակալը ենթավարձատուին վճարում է վարձավճար և տույժ ժամկետն անց յուրաքանչյուր օրվա համար վարձավճարի 1.0 %-ի (մեկ) տոկոսի չափով
7.9. Գույքը ենթավարձատուին չվերադարձնելու դեպքում և /կամ/ ենթավարձատուի հանդեպ պարտավորությունը չկատարելու դեպքում , սույն պայմանագրի լուծման մասին ծանուցման պահից ենթավարձակալին կամ նրա լիազորված անձանց արգելվում է մուտք գործել ենթավարձակալած տարածք , առանց ենթավարձատուի համաձայնության ինչպես նաև արգելվում է այդ տարածքից որևէ գույքի դուրս բերումը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

8.1.Սույն պայմանգրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո,և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

9.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

10.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:
10.2. Պայմանագրի հետ կապված ծախսերը կատարվում է **ենթավարձակալի** կողմից: